ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ Digitally signed by SHABOYAN ZHANETA 6704700161
Date: 2023.08.31 19:21:10 GMT+04:00 Ժ. ՇԱԲՈՅԱՆ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի

Ավետիք Իսահակյանի անվան N 9 հիմնական դպրոցի

տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հ. Ալլավերդյանի

2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային

ՊԼԱՆ

	Աշխատանքի բովանդակությունը	Նպատակը	Կատարման ժամկետը	Ծանոթություն
1.	Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների ընդունելության կազմակերպում:	Ընդունելության կազմակերպում «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն Սովորողի ընդգրկման, հաստատությունից սովորողիտեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթությանմեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման» կարգի պահանջներին համապատասխան:	Օգոստոս	
2.	Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում, ուսումնական ծրագրերի կատարման ապահովում: Իրականացնել ներառական կրթություն: Մասնակցել մանկավարժահոգեբանական ծառայությունների աջակցության թիմի կազմմանը, համակարգել թիմի աշխատանքները: Կատարել դպրոցական մակարդակի գնահատում:	Սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի ապահովում: ԱՈՒՊ- կազմում, իրականացում: Ամենամսյա նիստերի գումարում:	Ուստարվա ընթացքում Յուրաքանչյուր ամիս	
3.	Հանրակրթական պետական չափորոշչում կատարված փոփոխությունների ուսումնասիրություն և ներկայացում մ/խ նիստում կամ առանձին սեմինարի ձևով:	Հանրակրթական պետական չափորոշչի դրույթների ապահովում:	Օգոստոս	

4.	2023-2024 ուստարվա տարիֆիկացիայի և նրա բաղադրիչների կազմում:	Դպրոցի ուսպլանի պահանջների կատարում:	Օգոստոս-սեպտեմբեր	
5.	Ուսումնական պարապմունքների դասաբաշխում: Դասացուցակի կազմում՝ 1-ին կիսամյակի համար, 2-րդ կիսամյակի համար, ՏՀՏ դասերի համակարգում:	Դասացուցակին ներկայացվող պահանջների կատարում: Դասապրոցեսի արդիականացում	Օգոստոս Հունվար Մշտապես	
6.	Ուսուցիչների աշխատաժամանակի նորմավորում՝ ելնելով նրանց շաբաթական ժամաքանակի ծանրաբեռնվածությունից, ըստ կողմնորոշիչ աղյուսակի ու դասացուցակի ընձեռած հնարավորության:	ՀՀ կառավարության որոշում	Սեպտեմբեր	
7.	Բացակա ուսուցիչների հաշվառում,բաց թողնված և փոխարինած դասաժամերի արձանագրում և ժամավճարային հաշվարկների ներկայացում:	Դպրոցի կանոնադրություն	Ուստարվա ընթացքում	
8.	Առարկայական մասնախմբերի կազմավորում Հանրակրթության պետական նոր չափորոշչի ուսումնասիրում, քննարկում: 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների նոր ծրագրերի,դասագրքերի ուսումնասիրում:	Մեթոդմիավորման կանոնադրության պ.	Մինչև սեպտեմբերի 1 Ուստարվա ընթացքում	
9.	Օգոստոսյան խորհրդակցության մասնակցություն: Մեթոդական գրականության, ուղեցույցերի տրամադրում մ/մ նախագահներին, առարկայական ուսուցիչներին:	Մեթոդմիավորման կանոնադրության պ.	Մինչև սեպտեմբերի 1	

10.	Ծանոթացում նոր ուստարվա գնահատման համակարգի վերաբերյալ մեթոդական ցուցումներին: Ուսուցիչներին ծանոթացնել դասացուցակի և ժամերի բաշխմանը:	Գնահատման չափանիշների, ձևերի և մեթոդների ապահովում	Մինչև սեպտեմբերի 1	
11.	Սովորողի ուսումնառության արդյունքների ընթացիկ գնահատման իրականացումը քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով՝ դպրոցի մ/խ-ի կողմից հաստատված կարգով:	Գնահատման չափանիշների, ձևերի և մեթոդների ապահովում. ձևավորող գնահատման մեթոդները և ձևաչափն ընտրում է դպրոցը:	Օգոստոս	
12.	Միավորային գնահատման բաղադրիչների՝ բանավոր հարցման և գրավոր աշխատանքների քանակի ճշտում՝ ըստ առարկաների, դասարանների:	Գնահատման չափանիշների, ձևերի և մեթոդների ապահովում:	Օգոստոս	
13.	Յուրաքանչյուր օրվա գործընթացների և աշխատակարգի իրականացում:	Ուսուցիչների գործունեության և աշակերտների պատրաստվածության վերահսկողություն	Մշտապես	

	Աշխատանքի բովանդակությունը	Նպատակը	Կատարման ժամկետը	Ծանոթություն
14.	Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբերի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքնային տարեկան գործունեությունը դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ, որի ընթացքում հանձնարարել. **ա/** առարկայական մասնախմբում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուս. տարվա աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման, **բ/** ուս. պլանի դպրոցական բաղադրիչ սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, **գ/** Ստուգել ծրագրային նյութերի և թեմատիկ պլանավորման առկայությունը ուսումնական առարկաներից և հաստատել:	Ուսումնական գործընթաձի կազմակերպում	Մինչև սեպտեմբերի 10-ը	
15.	Ուսուցիչներին ծանոթացնել էլեկտրոնային մատյաններում աշխատելու կանոններին: Ծանուցել՝ էլ. մատյաններում գրանցումները կատարել յուրաքանչյուր օր	Մատենավարության վերահսկում	Մինչև սեպտեմբերի 15 Յուրաքանչյուր օր	

16.	Թեմատիկ առարկայական ուսումնական պլանների, առարկայական չափորոշչային պահանջների, գնահատման նորմատիվների կատարողականի ընթացիկ վերահսկողություն:	Ուսումնական գործընթացի համակարգում	Պարբերաբար	
17.	Առանձին ուսուցիչների աշխատանքային գործունեության ուսումնասիրություններ, գիտելիքների որակը բարելավելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մ/մ նիստերում:	Ուսումնական գործընթացի համակարգում, դասի արդյունավետության բարձրացում	Ըստ ՏԱՊ-ի	
18.	Մ/Խ-ին ներկայացվող ամփոփագրերի և հաշվետվության կազմում:	Դպրոցի կանոնադրություն	Դեկտեմբեր, մայիս	
19.	Մ/Խ-ի որոշումների իրականացման ուղղությամբ կատարվող աշխատանքների համակարգում:	Դպրոցի կանոնադրություն	Ուստարվա ընթացքում	
20.	Մ/Մ նախագահների հետ համատեղ կազմակերպել խորհրդակցություններ՝ սովորողների գիտելիքների որակը բարելավելու, դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու, աշակերտների կարողություններն ու հմտությունները զարգացնելու ուղղությամբ:	Դպրոցի կանոնադրություն: Ուշադրություն դարձնել աշակերտների կարողունակությունների ձևավորմանը, ինչպես նաև կարևորել վերջնարդյունքները:	Պարբերաբար	
21.	Հետևել էլ. մատյանների հետ տարվող աշխատանքներին: Ժամանակին և ճիշտ կատարել լրացումները: Հետևել ԿԶՆԱԿ-ի կայքէջերում տեղադրված նորություններին, ինչպես նաև համագործակցել նրանց հետ:	Մատենավարության վերահսկողություն: Ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ և լիարժեք կազմակերպում:	Մշտապես	

	Աշխատանքի բովանդակությունը	Նպատակը	Կատարման ժամկետը	Ծանոթություն
22.	Աշխատանք ԿԱՊԿՈՒ սովորողների և նրանց ծնողների հետ։	ԿԱՊԿՈՒ երեխաների ինտեգրումը կոլեկտիվին։	Ուստարվա ընթացքում	
23.	Աշակերտների շրջանում զարգացնել ռազմահայրենասիրական դաստիարակություն, սեր հայրենիքի նկատմամբ, ազգային խորհրդանիշերի, կրոնի, ազգային մշակույթի հանդեպ, դասալսում Հայ. եկեղ. պատմ. և ՆԶՊ առարկաներից։	Սովորողների արժեհամակարգի ձևավորում։	Սեպտեմբեր, հունվար, մայիս	
24.	Որոնել և մշակել կատարելագործման մեթոդներ՝ ցածր առաջադիմություն ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին շարունակական աջակցության նպատակով։	Ուսումնական գործընթացի համակարգում, առաջադիմության բարձրացում։	Նոյեմբեր	
25.	Սովորողների վարքի նկատմամբ հսկողության իրականացում, հաճախումների վերահսկողություն	Կարգապահության վերահսկում, համավարակի կանխարգելում։	Յուրաքանչյուր օր	
26.	Պարտադիր ուսումնական գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողական խորհուրդներին։	Ծնող-դպրոց կապի ամրապնդում։	Ծնողական խորհրդի նիստերի ժամանակացույց	

	Աշխատանքի բովանդակություն	Նպատակը	Կատարման ժամկետը	Ծանոթություն
27.	Սովորողների ոսումնական պարապմունքների մշտադիտարկում և առաջադիմության նկատմամբ վերահսկողություն: Էլ. մատյանում սովորողների գնահատման և հաճախումների գրանցման վերահսկողություն (ՆԴՎ):	Սովորողների ընթացիկ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ծանոթացում, դրանց համապատասխանությունը չափորոշչային պահանջներին:	Յուրաքանչյուր օր	
28.	Ուսուցիչների աշխատանքային գործունեության ստուգում՝ թեմատիկ գրավոր աշխատանքներին համապատասխան Ուսումնական աշխատանքների նկատմամբ ուսուցիչների օրվա դասի պլանների հսկողություն:	Ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության ստուգում: Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ոսուցման կատարելագործում:	Հոկտեմբեր, մարտ Մշտապես	
29.	Անցկացնել մասնախմբերի ղեկավարների խորհրդակցություն, լսել նրանց հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ, անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ աշխատանքային պլաններում: Քննարկել մեթոդամանկավարժական և ուսումնադաստիարակչական հրատապ հիմնահարցեր:	Մասնախմբերի աշխատանքների համակարգում:	Հոկտեմբեր, դեկտեմբեր, մարտ, մայիս	
30.	Կատարել դասալսումներ, քննարկել մ/մ նիստերում: Ուսումնասիրել տարրական դասարաններում ուսումնադաստիարակչական աշխատանքների	Ուսուցիչների դասավանդման մեթոդների ուսումնասիրում:	Ըստ համապատասխան մ/մ պլանի	

	դրվածքը: Հատուկ ուշադրություն դարձնել 2-րդ դասարանների առարկայական ծրագրերի կատարմանը և դրանց յուրացման որակին:			
31.	Պարբերաբար ստուգել դասին ուսուցիչների պատրաստվածությունը, խթանել օրվա դասի պլանի գործածումը, բարձրացնել դրանց կիրառական արդյունավետությունը:	Ուսուցչի գործունեության ուսումնասիրում:	Պարբերաբար	

	Աշխատանքի բովանդակությունը	Նպատակը	Կատարման ժամկետը	Ծանոթություն
32.	Ուսումնական աշխատանքների նկատմամբ հսկողություն:	Հանրակրթական տարրական և հիմնական ծրագրերի շրջանավարտների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ապահովում:	Մշտապես	Բոլոր առարկաների ուսուցման ընթացքում խաչվող հասկացությունների՝ որպես առանցքային գաղափարների կիրառման ապահովում:

	Աշխատանքի բովանդակությունը	Վերահսկողություն	Պատասխանատու
		ՍԵՊՏԵՄԲԵՐ	
33.	Ուսումնասիրել Հայաստանի աշխարհագրության և ՆԶՊ-ի դասավանդման որակը 9-րդ դասարաններում և արդյունքները քննարկել մեթոդ միավորման նիստերում:	Առարկաների յուրացման ուսումնասիրում:	Ուսմասվար Մ/մ նախագահներ, ուսուցիչներ
		ՀՈԿՏԵՄԲԵՐ	
34.	Ուսումնասիրել անգլերեն 4-րդ, ռուսերեն 3-րդ, Կերպարվեստ, մաթեմատիկա 6-րդ, պատմություն 8, 9-րդ, ֆիզիկա 8,9-րդ դասարաններում, կերպարվեստի դասավանդման դրվածքը, ինչպես նաև տառուսուցման մեթոդները մայրենիից 1-ին,	Առարկաների յուրացման դասավանման մեթոդների, ուսումնասիրում:	Ուսմասվար, Մ/մ նախագահներ, ուսուցիչներ

	ռուսաց լեզվից 2-րդ, անգլերենից 3-րդ դասարաններում և արդյունքները քննարկել համապատասխան մեթոդ միավորման նիստերում:		
		ՆՈՅԵՄԲԵՐ	
35.	Ուսումնասիրել մայրենի 1-4-րդ և 6-րդ, հ. լեզու, գրականություն 8-րդ, հանրահաշիվ և երկրաչափություն 8-րդ, ինֆորմատիկա 8, 9-րդ, քիմիա 8-րդ, ռուսաց լեզու 4-րդ, անգլերեն 6-րդ դասարաններում դասավանդման դրվածքը և արդյունքները քննարկել մեթոդ միավորման նիստերում (նախատեսել գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից): Կազմակերպել սպորտլանդիա 8 և 9-րդ դասարանների միջև:	Առարկաների յուրացման դասավանման մեթոդների, ուսումնասիրում:	Ուսմասվար Մ/մ նախագահներ, ուսուցիչներ
		ԴԵԿՏԵՄԲԵՐ	
36.	Ուսումնասիրել մաթեմատիկա 1-4-րդ, ես և շրջակա աշխարհը 3-րդ, հասարակագիտ. 8, 9-րդ, հանրհաշիվ և երկրաչափություն 7-րդ, տեխնոլոգիա 6-րդ և ռուսաց լեզու 6-րդ դասարաններում և հ. եկ. պատմության դասավանդման դրվածքը և արդյունքները քննարկել մեթոդ միավորման նիստերում:	Առարկաների յուրացման դասավանման մեթոդների, ուսումնասիրում:	Ուսմասվար Մ/մ նախագահներ, ուսուցիչներ

		ՀՈՒՆՎԱՐ	
37.	Ուսումնասիրել հայոց լեզու և գրականություն 7-րդ, տեխնոլոգիա 1-4, 5-րդ, պատմություն 7-րդ, աշխարհագրություն 7,8-րդ, ՆԶՊ 8-րդ, ռուսաց լեզու և անգլերեն 7-րդ դասարաններում դասավանդման դրվածքը և արդյունքները քննարկել մեթոդ միավորման նիստերում: Ուսումնական նախագծերի պլանավորում 7-րդ դասարանում:	Առարկաների յուրացման դասավանման մեթոդների, ուսումնասիրում: Նախագծային աշխատանքների իրականացում:	Ուսմասվար Մ/մ նախագահներ, ուսուցիչներ
		ՓԵՏՐՎԱՐ	
38.	Ուսումնասիրել իմ հայրենիքը 5-րդ, մաթեմատիկա 5-րդ, մայրենի 5-րդ, ինֆորմատիկա 5-րդ, ես և շրջակա աշխարհը 2-րդ և 4-րդ, ֆիզիկա և քիմիա 7-րդ, ռուսաց լեզու և անգլերեն 8-րդ դասարաններում դասավանդման դրվածքը, ընթերցանության գնահատում 2-4-րդ դասարաններում և արդյունքները քննարկել մեթոդ միավորման նիստերում:	Առարկաների յուրացման դասավանման մեթոդների, ուսումնասիրում:	Ուսմասվար Մ/մ նախագահներ, ուսուցիչներ
39.	Թումանյանական օրեր, նվիրված Հովի,Թումանյանի ծննդյան օրվան և գիրք նվիրելու օրվան/1-9-րդ դասարաններ	Սովորողների արժեհամակարգի ձևավորում:	Ուսմասվար
		ՄԱՐՏ	
40.	Ուսումնասիրել հայոց լեզու և գրականություն 9-րդ, կերպարվեստ 7-րդ, հանրահաշիվ և երկրաչափություն 9-րդ, կենսաբանություն 7-րդ և 8-րդ, ռուսաց լեզու և անգլերեն 5-րդ	Առարկաների յուրացման դասավանման մեթոդների, ուսումնասիրում:	Ուսմասվար Մ/մ նախագահներ, ուսուցիչներ

	դասարաններում, երաժշտության դասավանդման դրվածքը և արդյունքները քննարկել մեթոդ միավորման նիստերում (նախատեսել գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից): Կազմակերպել սպորտլանդիա ֆիզկուլտուրայից:		
		ԱՊՐԻԼ	
41.	Ուսումնասիրել պատմություն 6-րդ, հասարակագիտություն 7-րդ, ինֆորմատիկա 6-րդ և 7-րդ, աշխարհագիտություն և բնագիտություն 6-րդ, ռուսաց լեզու և անգլերեն 9-րդ դասարաններում, շախմատի դասավանդման դրվածքը և արդյունքները քննարկել մեթոդ միավորման նիստերում (նախատեսել գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից):	Առարկաների յուրացման, դասավանման մեթոդների ուսումնասիրում:	Ուսմասվար Մ/մ նախագահներ, ուսուցիչներ

	Աշխատանքի բովանդակությունը	Նպատակը	Կատարման ժամկետը	Ծանոթություն
42.	Վերահսկել ուսուցիչների աշխատանքային գործունեության ոլորտները, ծրագրային նյութի կատարողական, գնահատման գործընթացը, սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանությունը կրթական չափորոշչային պահանջներին:	Մանկավարժների գործունեության վերլուծություն:	Ամեն շաբաթ	
43.	Աշակերտների՝ քննությունների պատրաստվածության մակարդակի ստուգում:	Հուզող հարցերի պարզաբանում և վերհանում, լուծումների առաջադրում:	Մայիս	
44.	Հրավիրել մանկավարժական խորհրդատվություններ, սեմինարներ, բանավեճեր, քննարկումներ, հաղորդումներ ուսուցման, գնահատման, կիսամյակային և տարեկան ամփոփումների, փոխադրման և ավարտման կարգի, քննությունների և վերաքննությունների կարգի, էլ. մատյանների վարման կարգի, emis.am-կայքի գործունեության, մանկավարժական մեթոդիկայի նորությունների, տարիքային հոգեբանության, արժեքային համակարգի ձևավորման, սովորողների և աշխատողների ներքին կարգապահական և այլ հարցերի վերաբերյալ:	Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացում: Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերհանում:	Առնվազն երկու ամիսը մեկ	

45.	Մասնակցել ծնողական ժողովներին, ծնողական խորհրդի և աշ. խորհրդի նիստերին (կարելի է նաև հեռավար), դրանցում հանդես գալ ուսումնադաստիարակչական բնույթի հարցերի պարզաբանմամբ (անհրաժեշտության դեպքում)։	Ծնողներին ու աշակերտներին հուզող հարցերի պարզաբանում և վերհանում, համապատասխան լուծումների առաջադրում։	Ըստ անհրաժեշտության	
46.	Առարկայական օլիմպիադաների դպրոցական կազմկոմիտեի կազմում և նիստերի գումարում, խրախուսումների առաջադրում։	Օժտված աշակերտների բացահայտում, նրանց հետ տարվող աշխատանքներ։	Նոյեմբեր	
47.	Դպրոցականների առարկայական օլիմպիադաների նախապատրաստում և իրականացում, դրանց արդյունքների ամփոփում և քննարկումներ մանկխորհում, մասնախմբերում, աշ. խորհրդում և ծնող-խորհրդում։ ա. դպրոցական փուլ, բ. առցանց փուլ, գ. տարածաշրջանային փուլ, դ. մարզային փուլ, ե. հանրապետական փուլ։	Մրցույթներին և միջոցառումներին ուսուցիչների և աշակերտների հաջող մասնակցության ապահովում։	Դեկտեմբեր հունվար-փետրվար մարտ մարտ-մայիս	
48.	Ուշադրության կենտրոնում պահել մատենավարությունը, լսել մասնախմբերի նախագահների հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին։	Մատենավարության կարգի պահպանում։	Պարբերաբար	
49.	Ժամանակին կազմակերպել խորհրդատվություններ, պարապմունքներ աշակերտներին քննությունների նախապատրաստելու համար։	Քննությունների նախապատրաստում։	Մայիս	

50.	Ուսուցիչներին, աշակերտներին, ծնողներին ծանոթացնել քննական հրահանգներին և քննական կարգացուցակին։	Քննությունների նախապատրաստում:	Մայիս	
51.	Կազմապերպված անցկացնել քննությունները՝ ըստ ԿԳՄՍ նախարարի հրահանգի։	Քննությունների կազմակերպում։	Ըստ ժամանակացույցի	
52.	Աշխատանքներ սահմանված ժամաքանակից ավել բացակայած աշակերտների հետ։ 120 և ավել դասաժամ բացակայություն ունեցող աշակերտների լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների անցկացում։	Փոխադրման և ավարտման կարգի պահպանում։	Դեկտեմբեր, մայիս	
53.	Տարեկան առաջադիմության վերլուծում, սովորողների գիտելիքների գնահատում։	Փոխադրման և ավարտման կարգի պահպանում։	Հունիս	
54.	Ներկայացնել առաջարկություններ ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղությամբ։	Առաջադիմության բարելավում։	Հունվար	
55.	Ծանոթացնել ուսուցիչներին տարակարգի բնութագրիչներին և դրանց շնորհման չափանիշներին՝ մղելով նրանց տարակարգ ստանալուն։	Առաջավոր փորձի փոխանակում։	Պարբերաբար	
56.	Բոլոր մ/մ նախագահների հետ քննարկել «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի կանոնները և մաս.հավ.։	Ուսուցիչների որակավորման բարձրացման գործընթաց։	Ըստ անհրաժեշտության	

	Աշխատանքի բովանդակություն	Նպատակը	Կատարման ժամկետը	Ծանոթություն
57.	Վերապատրաստման կարիք ունեցող մանկավարժների ցանկի հստակեցում և նրանց իրազեկում՝ ըստ սահմանված կարգի:	Ուսուցիչների որակավորման բարձրացում:	Հոկտեմբեր	
58.	Վերապատրաստման դասընթացներին, սեմինարներին, մրցույթներին ուսուցիչների մասնակցության ապահովում (ըստ պահանջի):	Ուսուցիչների որակավորման բարձրացում:	Ուստարվա ընթացքում	
59.	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:	Ուսուցիչների որակավորման բարձրացում:	Սեպտեմբեր, հունվար	
60.	Տարակարգման դիմած ուսուցիչների գործունեության ուսումնասիրում և անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում և կազմում:	Ուսուցիչների որակավորման բարձրացում:	Ըստ անհրաժեշտության	
61.	Սկսնակ և սակավափորձ ուսուցիչների գործունեության վերահսկողություն:	Ուսուցիչների որակավորման բարձրացում:	Մշտապես	
62.	Ինքնակրթության ուղղությամբ՝ մանկավարժների գործունեության համակարգում, կամավոր ատեստավորման խթանում:	Ուսուցիչների որակավորման բարձրացում:	Մշտապես	
63.	Մանկավարժների կողմից դասասենյակների ձևավորում, դիտակտիկ և ուսուցման համար	Ուսումնանյութական բազայի հարստացում:	Օգոստոս, սեպտեմբեր	

	անհրաժեշտ այլ պարագաների հավաքագրում:			
64.	Ուսուցիչների մեթոդական աշխատանքների կազմակերպում:	Մանկավարժների մեթոդական գործունեության վերլուծություն:	Ուստարվա ընթացքում	
65.	Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ Կառավարության որոշումներին, ՀՀ աշխ. Օր. Փոփոխություններին, ԿԳՄՄՆ ընդունած որոշումներին և հրամաններին:	Որոշումների և հրամանների իրազեկում:	Ըստ անհրաժեշտության	
66.	Դպրոցական գրադարանի աշխատանք:	Մեթոդական և թեմատիկ ցուցադրումների կազմակերպում:	Ուստարվա ընթացքում	

	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Ծանոթություն
1.	Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում, ուսումնական ծրագրերի կատարման, դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի ապահովում։	Մշտապես	
2.	Հսկողություն իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը։	Մշտապես	
3.	Ուսումնական հաստատության տնօրենի հետ համատեղ իրականացնել հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարումը, ապահովել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի և տարածքային կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը։	Մշտապես	
4.	**ա)** Կազմել ուսումնական պարապմունքների դասացուցակը։	1-ին կիսամյակ	
		2-րդ կիսամյակ	
	բ) Կազմել ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվություն։	Պարբերաբար	

5.	Ղեկավարել առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները, ընդհանրացնել և տարածել մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, աջակցել ուսումնական նոր մեթոդների ներդրմանը, ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:	Մշտապես	
6.	**ա)** Կազմակերպել սովորողների ուսումնական պարապմունքների հսկողություն:	Մշտապես	
	բ) Ներկայացնել առաջարկություններ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ:	Պարբերաբար	
7.	Հսկել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը: Աջակցել սկսնակ ուսուցիչներին:	Մշտապես	